ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Արարատ Գրիգորյանին
29/11/2021

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություն հետևյալ հարցերի շուրջ.

1. 6-17 տարեկան քանի՞ հաշմանդամություն ունեցող երեխա կա Վայոց ձորի մարզում: Նրանցից քանի՞սն ունեն մտավոր խնդիրներ և քանի՞սը՝ ֆիզիկական (խնդրում եմ առանձնացնել հենաշարժողական խնդիր ունեցողների թիվը նույնպես):
2. 6-17 տարեկան քանի՞ հաշմանդամություն ունեցող երեխա է սովորում Վայոց ձորի մարզի հանրակրթական դպրոցներում: Նրանցից քանի՞սն ունեն մտավոր խնդիր և քանի՞սը՝ հենաշարժողական:
3. Ո՞ր հանրակրթական դպրոցներում են սովորում վերոնշյալ խմբերին պատկանող աշակերտները: Խնդրում եմ տրամադրել դպրոցների ցանկը:
4. Ներառական կրթության ծրագրում ընդգրկված աշակերտներից քանիսի հետ է իրականացվում տնային ուսուցում և քանի՞սն են հաճախում դպրոց:
5. Հաշմանդամություն ունեցող երեխաների շրջանում կա՞ն պարտադիր կրթությունից դուրս մնացածներ Վայոց ձորի մարզում: Եթե այո, քանի՞սն են նրանք:

Կանխավ շնորհակալություն:
Հարգանքով՝
Սոնա Հովսեփյան

Հետք մեդիա գործարանի ուսանող, լրագրող

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 9222
30. 11 2021

0001, Երևան, Հայաստան
Նալբանդյան 106/1, Սայաթ-Նովա
բիզնես կենտրոն
Հեռախոս՝ +374 44 20 20 48
Էլ. հասցե՝ info@mediafactory.am
Կայք՝ mediafactory.am

MEDIA FACTORY

0001, Yerevan,Armenia
106/1 Nalbandyan Sayat-Nova
Business Center
Phone: +374 44 20 20 48
E-mail: info@mediafactory.am
Website: mediafactory.am